Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 14 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն-2013»,«Հյաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաչարձան գյուղի բուժկետի և բազմաֆունկցիոնալ սրահի կառուցում» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 10 մանկապարտեզի խաղահրապարակի կահավորում» ծրագրերը.

«Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2013-2014 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառույցի պահպանման և հետագա զարգացման աջակցություն» ծրագիր.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Երեխաների հովանավորություն», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լանջաղբյուր համայնքի միջնակարգ դպրոցի սպորտի դահլիճի վերանորոգում» , «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի տարածաշրջանի նախադպրոցական, արտադպրոցական և առողջապահական հաստատությունների կահավորման բարելավում» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ազատ համայնքի դպրոցի պատուհանների մասնակի վերանորոգում» ծրագրերը.

«Հիկարի» Հայ-Ճապոնական գիտակրթամշակույթային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հիկարի» կենտրոնի տարածքի բարեկարգում» ծրագիր.

«Երևանի Ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքի թիվ 16 մանկապարտեզի վերանորոգման 2-րդ փուլ» ծրագիր.

«Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2013-2015 թվականների ընթացքում իրականացվող ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվող ծրագիրը.

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի նոր կառուցվող բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի կառուցման» ծրագիրը.

Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2013-2014 թվականներին իրականացվող ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: